Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոկտեմբերի 17, 2016 թ.)

Սիրելինե՛ր,

Ուրախ ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված տեսնել հայկական գրադարանների եւ մշակույթի պատասխանատուներիդ ու պաշտոնյաներիդ:

Մեր օրհնությունն ենք բերում ձեզ եւ Մեր գնահատանքը՝ ձեր նախանձախնդիր մասնակցության համար Մայր Աթոռի Մատենադարանի, ՀՀ մշակույթի նախարարության եւ Ազգային գրադարանի կողմից հրավիրված համաժողովին, որ նվիրվում է Աստվածաշունչ մատյանի տպագրության 350-ամյակին:

Սուրբ Գրքի տպագրության հոբելյանը մեր ժողովրդի համար նշանակալի առիթ է՝ մեկ անգամ եւս արժեւորելու իր գրավոր ժառանգությունը եւ այն անխոնջ ջանքերն ու նվիրումը, որ մեր երախտավորների կողմից գործադրվել են հարուստ այդ ժառանգությունն ստեղծելու համար:

Տպագրությունը մարդկության մեծ ձեռքբերումներից մեկն է: Այն հնարավորություն տվեց, որ գիտելիքը, մարդկային մտքի նվաճումները արագորեն տարածվեն, լուսավորությունը հասնի հասարակության բոլոր շերտերին: Նույնիսկ կարելի է ասել, որ տպագրությունը արդի քաղաքակրթությունը ձեւավորող նպաստավոր պայմաններից մեկն է: Այս ընթացքի մեջ բոլորովին պատահական չէ, որ մեր ժողովուրդը աշխարհում առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ տպագրության գործին: Բնական ուղին էր դա մի ժողովրդի, որ մինչ տպագրության դարը մեկ հազարամյակ մայրենի լեզվով ձեռագիր մատյաններ էր ստեղծում՝ շատ հաճախ չունենալով խաղաղություն ու ապահովություն եւ ապրելով զրկանքների մեջ: Հոգեւոր կերակուրից, սակայն, ոչ ոք չկարողացավ զրկել մեր ժողովրդին, որ հավատարիմ քրիստոնեական իր ոգուն՝ հավատաց հոգեւոր զորության բարեփոխող ուժին եւ ապրեց ու ստեղծեց ի սեր խաղաղ ու արդար աշխարհի:

Դուք, սիրելինե՛ր, պահպանում, վերականգնում, ուսումնասիրում եւ ներկայացնում եք գրավոր ժառանգությունը, որին մեր ժողովուրդը պահ է տվել իր հոգին ու միտքը, իր պատմությունը, իր աշխարհճանաչողությունը, գիտելիքն ու հույզերը, իր բնաշխարհի բույրն ու գույները, որոնք պիտի փոխանցենք սերունդներին: Այսօր մենք ապրում ենք էլեկտրոնային գրքի դարում, որը նոր հնարավորություններ է ստեղծում, որ գրապահոցներում եղած ժառանգությունը հասու լինի հասարակությանը: Այս ուղղությամբ մեծապես գնահատում ենք վերջին տարիների ձեր ջանքերը, էլեկտրոնային գրադարանների ստեղծման ուղղությամբ իրականացված ծրագրերը: Ինչպիսի ձեւի մեջ էլ ներկայացվի՝ գիրքը պիտի շարունակի հոգեւոր սնունդ մատուցել մեր ժողովրդին, հաստատուն պահել աստվածօրհնյալ ճանապարհներում եւ առաջնորդել իր բարօր ու լուսավոր կյանքի կերտմանը:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք վերստին բերում ձեզ, սիրելինե՛ր, եւ մեր բարձր գնահատանքը՝ ձեր նվիրումի ու ծառայության համար, մեր մշակույթին, ազգային կյանքին բերած ձեր ավանդի համար: Ողջունում ենք այստեղ ներկայությունը ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար մեծարգո տիար Արմեն Ամիրյանի: Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր աջակիցներին:

Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղ պահի մեր հայրենիքը, պահպանի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի մեր ջանքերը՝ հանուն հոգեւոր եւ ազգային մեր կյանքի պայծառության եւ մեր ժողովրդի արդար իղձերի իրագործման:

Բարի ընթացք եւ հաջողություն ենք մաղթում համագումարի աշխատանքներին: